| ԹԵՄԱՆԵՐ<br>ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՇԱԲԱԹ |
|---|---|
| ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՇԱԲԱԹ | 1 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ԹԵՄԱ 1 | 2 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ԹԵՄԱ 2 | 3 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ԹԵՄԱ 3 | 4 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ: ԹԵՄԱ 1 | 5 |
| • **1-ին ընթացիկ առցանց քննություն** | 6 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ: ԹԵՄԱ 2 | 7 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ: ԹԵՄԱ 1 | 8 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ: ԹԵՄԱ 2 | 9 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ: ԹԵՄԱ 1 | 10 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ: ԹԵՄԱ 2 | 11 |
| ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ: ԹԵՄԱ 2 | 12 |
| • **2-րդ ընթացիկ առցանց քննություն**<br>• **Ավարտական աշխատանքի պաշտպանության պաշարների վերբեռնում** | 13 |
| • **Ավարտական առցանց քննություն** | 14 |
| • **Ավարտական աշխատանքի պաշտպանություն** | 15 |


**ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1**

**ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ**

**Հեռ.՝ + 374 60 71 00 92**

**Էլ. փոստ՝ dl@armin.am**

**www.armin.am/am/herausucum**

**www.facebook.com/IASofYSU**


# ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



**ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

## ՆՊԱՏԱԿ

Ծրագրի նպատակն է ապահովել համապատասխան լսարանի համար թեմատիկ մասնագիտական կրթություն՝ կիրառելով հեռաուսուցման և դասական ուսուցման համակցված մեթոդները:

## ԼՍԱՐԱՆ

Ծրագրի մասնակիցներ կարող են լինել ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի մեր հայրենակիցները: Ծրագրի յուրաքանչյուր խմբում կարող է մասնակցել առավելագույնը տասը ուսանող: Յուրաքանչյուր խումբ ունի իր դասախոսը, ով իրականացնում է խորհրդատվական բնույթի աշխատանք:

## ԹԵՄԱՆԵՐ

Ծրագիրը բաղկացած է մեկ ճանաչողական, տասը թեմատիկ փուլեր ընդգրկող դասաժամերից, որոնք հավասարաչափ բաշխվում են տասնմեկ շաբաթների միջև:

## ՔՆՆԱՇՐՋԱՆ

ա) Երկու ընթացիկ և մեկ ավարտական առցանց քննությունները, որոնք անցկացվում են համապատասխան ձևաչափով, նախապես սահմանված ժամերին: Առաջին ընթացիկ թեստային առցանց քննությունը տեղի է ունենում ուսուցման 7-րդ շաբաթվա ընթացքում, երկրորդ ընթացիկ թեստային առցանց քննությունը տեղի է ունենում 13-րդ շաբաթվա ընթացքում, իսկ ավարտական թեստային առցանց քննությունը տեղի է ունենում 14-րդ շաբաթվա ընթացքում:

բ)Ավարտական աշխատանքի պաշտպանությունն անցկացվում է 15-րդ շաբաթվա ընթացքում՝ բանավոր ընթացակարգով, նախապես ձևավորված հանձնաժողովի միջոցով, համապատասխան ձևաչափով, նախապես սահմանված ժամերին:

## ԳՆԱՀԱՏՈՒՄ

| ԱՆՎԱՆՈՒՄ | ԵՐԲ | ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿ | ՄԵԿ ՀԱՐՑԻ ՄԻԱՎՈՐ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱՎՈՐ | ԿՇԻՌԸ |
|---|---|---|---|---|---|
| 1-ին ընթացիկ առցանց քննություն | 7-րդ շաբաթ | 40 | 0.1 | 4 | 1 |
| 2-րդ ընթացիկ առցանց քննություն | 13-րդ շաբաթ | 40 | 0.1 | 4 | 1 |
| Ավարտական առցանց քննություն | 14-րդ շաբաթ | 100 | 0.1 | 10 | 2 |
| Ավարտական աշխատանքի պաշտպանություն | 15-րդ շաբաթ | - | - | 2 | 1 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԻՇ | | | | 20 | 5 |

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծրագրի շրջանակներում ուսուցման ամբողջական ժամկետը կազմում է տասներերեք շաբաթ, և չորս շաբաթ ամփոփիչ կրկնության համար:

## ՎԿԱՅԱԿԱՆ

Ծրագրի մասնակիցները ստանում են ԵՊՀ-ի կողմից տրվող ավարտական վկայական:

## ԻՆՉՊԵ՞Ս ԳՐԱՆՑՎԵԼ

Հեռաուսուցման կրթական ծրագրում գրանցվելու համար անհրաժեշտ է.

- https://goo.gl/BbPhQz հղման տեքստի մեջ «տվյալների թերթիկ» արտահայտությանը վերբեռնված word փաստաթուղթը ներբեռնել,
- լրացնել ներբեռնված փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը՝ կցելով անձնագրի կրկնօրինակի սքանավորված տարբերակը,
- ուղարկել տվյալները dl@armin.am –ին,
- պատասխան նամակով Դուք կստանաք ուսման վճարի և այլ քայլերի հետ կապված կարգավորումներ: